

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

4 մայիսի 2021 թ.

N 28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 24-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի ԹԻՎ 17-Ն
ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՍԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնները» հաստատելու մասին թիվ 24-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 4-րդ կետի 4-րդ ենթակետը «աշխատողների» բառից հետո լրացնել «կամ սովորողների» բառերով.

2) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Հաստատությունում երկարօրյա ծառայությունները, արտաուսումնական խմբակները կազմակերպվում են՝ ապահովելով սույն կանոնների պահանջները:»

3) լրացնել նոր՝ 32.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«32.1 Դասարանը կամ խումբը 14 օրյա ժամկետով անցնում է հեռավար կամ տնային ուսուցման, եթե տվյալ դասարանի կամ խմբի սովորողի կամ սովորողների հետ անմիջական շփման մեջ գտնվող աշխատողի (ուսուցիչ, մանկավարժ, լաբորանտ, հոգեբան և այլն) մոտ հաստատվում է կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19),:»,

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 17-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Հրամանի հավելված 8-ի 6-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Կազմակերպության մուտքի մոտ կատարվում է աշխատողների և բոլոր այցելուների ջերմաչափում՝ սնդիկային (որոնք օգտագործումից հետո ավտահանվում են՝ 70% սպիրտով) կամ հեռահար ջերմաչափով, սուր շնչառական վարակների ավստանշաններով (ջերմություն՝ 37°C և ավելի, հազ, հարբուխ, դժվարաշնչություն) աշխատողներին և այցելուներին մեկուսացնում են ընդունարանին կից մեկուսարանում:»

2) Հրամանի հավելված 12-ում.

ա. 4-րդ կետի 4-րդ ենթակետը «աշխատողների» բառից հետո լրացնել «կամ երեխաների» բառերով,

բ. 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Երեխաների խնամքի և կրթության գործընթացը կազմակերպվում է՝ ապահովելով խաղալու, պարապմունքների, սննդի և քնի ժամանակ երեխաների միջև սոցիալական հեռավորություն:»,

գ. Ուժը կորցրած ճանաչել 19-րդ կետը,

3) Հրամանի հավելված 17-ում.

ա. 4-րդ կետի 4-րդ ենթակետը «աշխատողների» բառից հետո լրացնել «կամ ուսանողների» բառերով,

բ. լրացնել նոր 27.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«27.1 Եթե ուսանողի մոտ հաստատվում է կորոնավիրուսային հիվանդություն, տվյալ խումբը 14 օրյա ժամկետով անցնում է հեռավար ուսուցման:»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 7 մայիսի 2021 թվական: